# «ՄՌՈՒԹԻԿԻ» ԱՅՑԸ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ



**Ամեն անգամ, երբ հերթական երկրում տեղի է ունենում հերթական ժողովրդավարական հեղափոխությունը, մենք ասում ենք՝ հաջորդը մեր հերթն է: Ու ամեն անգամ հերթական հեղափոխությունն անցնում է մեր կողքով:**

Իսկ ի՞նչ է պետք հեղափոխության համար. մնացած ամեն ինչից բացի պետք է, որ ժողովուրդը գոնե դժգոհ լինի իր վիճակից ու միաժամանակ դժգոհ լինի նաեւ իրեն այդ վիճակին հասցրած իշխանություններից: Մինչդեռ երեկ, երբ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հետ Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտում էինք, սկսեցինք մտածել, որ Հայաստանում հեղափոխություն չի լինելու: Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի գիտնականները ստանում են 20 հազար դրամ աշխատավարձ, մի քանի ամիս է չեն ստացել գիտական կոչման համար նախատեսված 5 հազար դրամ հավելավճարը, նրանց գիտական հայտնագործությունները չեն ֆինանսավորվում եւ չեն գնվում պետության կողմից, կառավարության թիվ 14/74 որոշմամբ իրենք իրավունք չունեն իրենց հայտնագործությունների ինքնուրույն վաճառելու, նրանց գիտական աշխատությունները չեն տպագրվում, ինստիտուտի դահլիճում յուրաքանչյուր թեթեւ հազից հետո առաստաղից մի մեծ կտոր ծեփ պոկվում եւ ընկնում էր գիտնականների գլխին, բայց ինստիտուտի աշխատակիցները երջանիկ էին: Իսկ ինչո՞ւ էին նրանք այդքան երջանիկ. որովհետեւ նրանց համար, ինչպես հոտընկայս ներկայացրեց Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Կոնստանտին Ղարագյոզյանը, երեկ պատմական օր էր՝ իրավագիտության դոկտոր Արթուր Բաղդասարյանը համաձայնել էր հանդիպել իրենց հետ: Իհարկե, գիտնականները մի քիչ ամաչում էին, որ գիտական կոչման հավելավճարը չստանալու պատճառով չեն կարողացել գոնե մի լղար գառ գնել ու մորթել, իրենց բնորոշմամբ՝ անբիծ եւ ազգի նվիրյալ Արթուր Բաղդասարյանի ոտքերի տակ, բայց այդ բացթողումը կոմպենսացրեցին կոմպլիմենտների տարափով. «Մենք պատրաստ ենք հեռուստացույցը գրկելու, երբ տեսնում ենք, թե դրսերում ինչպիսի բարձր պաշտոնյաներ են ընդունում ձեզ եւ այն էլ ի՜նչ մակարդակով: Ոչ, սա կոմպլիմենտ չէ, սա դուք եք, ազնիվ եւ անկաշառ, որ միայնակ պատերազմ եք հայտարարել կոռուպցիային: Դուք շատ ազնիվ կերպով ծավալել եք հակակոռուպցիոն գործունեություն, եւ դա խոսում է այն մասին, որ դուք անբիծ եք, եւ միայն դուք կարող եք այդ ծանրագույն գործունեությունը հասցնել իր ավարտին: Մենք հպարտանում ենք ձեզանով, որովհետեւ դուք ձեր անձով գովազդում եք մի ողջ հայ ժողովուրդ»,- ասաց հուզված Ղարագյոզյանը, իսկ դահլիճը թնդաց որոտընդոստ ծափահարություններից, ինչպիսին, թերեւս, չէր լսել այդ որակի ծափերի մեծ մասնագետ Արտաշես Գեղամյանը: Մոլեկուլյար կենսաբան մի տիկին էլ, դահլիճի վերջնամասում նստած, իր կողքի տղամարդուն պարբերաբար հարցնում էր. «Բայց մռութիկ ա, չէ՞»:

Մոտ մեկ ժամ տեւած հանդիպման ընթացքում կիսաքանդ դահլիճը պարբերաբար թնդում էր բուռն ծափահարություններից, երբ ՀՀ իշխանության երկրորդ դեմքն անխնա քննադատության էր ենթարկում երկրում ծաղկող կոռուպցիան ու կաշառակերությունը, ալան-թալան սեփականաշնորհումը, երբ կոպեկներով սեփականաշնորհվում ու արտոնյալ մարդկանց են նվիրվում հսկայական օբյեկտներ: Իսկ երբ ԱԺ նախագահը հասավ ԱԺ Վերահսկիչ պալատի վերջին ուսումնասիրությանն ու տեղեկացրեց, թե դրա արդյունքում քանի բարձրաստիճան պաշտոնյայի է նկատողություն հայտարարվել, գիտնականներից մեկը տեղից բղավեց. «Այ, հիմա ես հավատում եմ, որ մեր երկիրն ապագա ունի, եւ այդ ապագան դուք եք»: Ոգեւորված չարքաշ աշխատավարձով ապրող գիտնականների ջերմ ընդունելությունից՝ Արթուր Բաղդասարյանը տեղեկացրեց, որ ինքը հիմնել է ԱԺ նախագահի հատուկ մեդալ՝ երիտասարդ գիտնականներին պարգեւատրելու համար, որպեսզի երիտասարդ եւ կարող աշխատուժը չլքի հայրենիքը, խոստացավ տպագրել մոլեկուլյար կենսաբանների բոլոր գիտական աշխատությունները, խոստացավ զբաղվել նրանց աշխատավարձի խնդիրներով ու ամենավերջում էլ ազդարարեց, որ ամեն ինչ կանի, որպեսզի գիտական կոչում ունեցողներն իրենց կոչման հավելավճարը ստանան ցմահ: Ահա այս վերջին խոստումից հետո, արդեն ինստիտուտի բակում, ահել ու ջահել բոլոր գիտնականները կախվել էին ԱԺ նախագահի երկու թեւերից ու նրան ենթարկում էին երկարատեւ ու դաժան համբույրների: Իսկ երեկվա հանդիպումը 20 հազար դրամ աշխատավարձ ստացող եւ սոցիալապես խիստ անապահով գիտնականների հետ տվեց այն հարցի պատասխանը, թե ինչու Հայաստանում համառորեն հնարավոր չի լինում իրականացնել այն, ինչը թվում է անխուսափելի: Եւ, ի դեպ, իզուր են ընդդիմադիր լիդերները պարբերաբար անարգանքի սյունին գամում ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանին, երբ վերջինս պնդում է, որ մեր պրոբլեմը նաեւ մեր հասարակության մեջ է: Ի դեպ, վստահ ենք, որ մոլեկուլյար գիտնականները, ինչպես նաեւ սոցիալապես անապահով մեր մնացած խավերը, նույնպիսի խանդավառությամբ կընդունեին եւ Ռոբերտ Քոչարյանին, եւ Ստեփան Դեմիրճյանին, եւ Սերժ Սարգսյանին: Ինչ վերաբերում է ԱԺ նախագահի հաջորդ կանգառին՝ ռուսների պարտքի դիմաց վաճառված «Մարս» գործարանին, ապա այստեղ չկար չքավոր աշխատավորական կոլեկտիվ, որ գոհ լիներ իր կյանքից ու իշխանություններից, քանզի կոլեկտիվ չկար ընդհանրապես: Իսկ գործարանի ղեկավարության հետ հանդիպումը տեւեց 14 րոպե. մեր խորհրդարանի ղեկավարը ռուսական կողմին տեղեկացրեց, որ ՌԴ կառավարության եւ Պետդումայի ղեկավարներն իրեն խոստացել են, որ «Մարսը» կաշխատի, ռուսական կողմի ներկայացուցիչն էլ ասաց, որ «Մարսը» քյարփինջ չի արտադրում, ուստի աշխատեցնելը հեշտ չի լինելու: Սակայն կողմերը պայմանավորվեցին, որ հայկական կողմը կշարունակի նամակներ հղել ՌԴ իշխանություններին ու «Մարսի» հարցը կպահի օրակարգում, իսկ ռուսական կողմը կմտածի՝ ինչպես աշխատեցնել «Մարսը»:

*ՆԱԻՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ*